

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ՊՕՍ. 021

Գիտելիք

Գրեթէ անլուծանելի հարցում մըն է թէ տակաւին քանի դար պէտք է այս ահաւոր սողնոյս ճեղքը երկրիս վրայէն ջնջուելու համար: Անոր ահաւոր մեծութեանը հասու ըլլալու համար՝ հաւանաւ կանադունին հաւատալու է ճանապարհորդաց ըսածներուն մէջէն: Ոմանք ինչուան եօթանասուն ոտք կը հանեն Պօային երկայնութիւնը, այլք ալ հազիւ յիսուն. ուրիշ մը կ'ըսէ թէ յիսուն և երկու ոտք գաղղիական երկայնութեամբ Պօայի մաշկ մը տեսեր է՝ ի Տէլհի. իսկ Պ. Բինդոյին յիսուն և հինգ ոտք երկայնութեամբ լիսպոնա դրկած ահազին Պօան ամենաստոյգ է:

Կարողոս Ովէն ալ՝ որ երեւելի և աներկիւղ որսորդներէն մէկն է, կ'ըսէ թէ Պաղաւիայի չրջակայները Պօա մը բռններ է յիսուն ոտքէն աւելի երկայն: Բայց այս չափերը չափազանց չեն երեւար մեզի՝ թէ որ հնոց պատմածներն ալ լսենք. ըստ Պլինիոսի բնախօսի հարիւր և քսան ոտք երկայնութեամբ օձի մը մաշկը՝ երկայն ատեն դրասանգի ձեւով, հռովմայեցոց մեհենաց մէկունմէջ կախուած մնաց. ըստ Դիոգորի Սիկիլիացոյ, որսորդը՝ Պտղոմէոսի պարզենէն խրախուսուելով, երեսուն կանգուն երկայնութեամբ օձ մը բերին յԱղքեսանդրիա:

Բայց սակայն ֆոնկոյի և Անկոլի թաղաւորութեան և խորին Ափրիկոյ այրեցող աւազներուն մէջ եղած ահաւոր Պօաները ուրիշ տեղ չեն գտնուիր. հոն ստուգուեցաւ, ճանապարհորդներէն ու մանց ըսածին հակառակ, որ Պօան ալ աներկիւղ ջրէն, ամենամեծ երազութեամբ կը լուղայ եղեր:

Կ'ըսուի թէ Ոսկէափանց Սեբըր այս ահաւոր օձիս միւսը կ'ուտեն և ազնիւ կը գտնեն: Այսպէս կը պատմէ Սիմոն անուամբ սպանիացի կրօնաւոր մը, ու

րուն ստուգութեանը վրայ թերեւ չատերը տարակուսին: « Ութ և տասն Սպանիացիք յողնած դադրած վենեցուելա նահանգին մէջ Քարոյի անտառը կը հասնին, և հոն թմրած ընդարմացած օձի մը վրայ կը նստին, ծերացեալ ծառի մը կոճղ կարծելով զայն. և երբորնստած կրօնաւորին հասնելուն կը սպասէին, մէյմ'ալ կենդանին կը սկսի քալել, ու վրան նստողները ահուդողի մէջ կը ձգէ»: Մոնդուայեա քարոզիչն ալ սովորականէն մեծ հնդիկ մը կը տեսնէ, որ ձկնորսութեան համար մինչև ցգօտին ջրոյ մէջ մտած ըլլալով, օձ մը կը կլլէ զայն, ու երկրորդ օրը անթերի դուրս կը հանէ: Անդրէաս Գլէյրոսի նամակներուն մէջ ալ կը կարդանք՝ որ յԱմպվան շատ ամսուան յղի կին մը այսպիսի կենդանիէ մը կը կլլուի. դարձեալ Կլոդիոս կայսեր ժամանակ Պօա մը կը սպաննեն, որուն փորուն մէջ տղու մը ամբողջ մարմինը կը գտնեն:

Կը պատմէ Սալմոն, որ Մաքսասար կղզւոյն մէջ տեսակ մը կապիկներ կան՝ որք կը յարձակին ճանապարհորդաց վրայ, կը պատուտեն զանոնք ու կ'ուտեն, այս օձերէն միայն կը վախեն. և այս պատճառաւ խմբովին կը քալեն. բայց այսու ևս շատ անգամ ողջ ողջ Պօաներուն կերակուր կ'ըլլան:

Ոմանք Պօա օձին համար կը պատմեն թէ ծառոց վրայ թառեալ թըռչունները իրեն կոկորդին մէջ կը ձգէ. օձին այս կարողութիւնը բնախօսք սողնոյն ապականիչ շնչոյն կու տան, որով կ'ապականէ օդը և մահառիթ ժահահոտութեամբ կը լեցունէ զայն. անկէ թըռչունները կը թմրին ու ժաթափ կ'ըլլան և տեսակ մը անզգայութեան մէջ կ'ընկղմին, ու յետոյ առանց դժուարութեան օձին բաց կոկորդին մէջ կ'իյնան:

Պօա օձին գլխոյն գագաթը լայն է, ճակատը բարձր և երկու բաժանեալ ըստ երկայնութեան. աչքերը սաստիկ մեծ, ակնակապիճն ալ դուրս ցցուեալ: Կնճիթը երկայն, և ծայրը խայտաբղէտ մեծ թեփ մը ունի. կոկորդին բացուածքը ամենամեծ է, ատամունքը երկայն.

տուտը կարծր և ջղոտ, և ինն անգամ փոքր քան զամբողջութիւն մարմնոյն:

Թեփերուն գոյները կենդանի և խաւ տուտիկ են. բայց կ'այլազունին երբ կենդանին կը մեռնի, և ամեն կլիմայի տակ միօրինակ չեն: Կոնսկը ձուածե և համեմատական պիսակներով բծաւորեալ է, պիսակներն ալ թուխ գծով մը շրջապատեալ են. մարմնոյն վերին մասը միխրագոյն գեղին է, սև բիծերով խառնեալ. իսկ փորին գոյնը պայծառ գեղնի զարնող կանաչ է:

Բաց աչուրներդ, ով մարդ, հսկէ չորս կողմդ, վասն զի թշնամին քեզի մօտ է և ամենամօտ: Երբեմն կծկեալ անշարժ կեցած, երբեմն ալ կ'երկայնի, կը ծածանի և կը տատանի, կարծես թէ մերթ կ'ուզէ աչքի չերևալ, և մերթ բարեկամութիւն ընել. բայց մի խաբուիր, վասն զի միշտ արին և մահ կը մտաբերէ: Վայ եթէ իւր հանգուցիցը մէջ իյնալու ըլլաս, կը խեղդէ գրեզ անտարբեր ու կը սպաննէ առանց թունի, վասն զի թշնամի է կենդանեաց և որ և է շարժնոց: Կարծեմ լաւագոյն է ըսել թէ կը խայտայ վագեր նման, վրթի պէս կը դիմէ և իբրև զանդղ կը խոյանայ քան թէ կը սողայ, կը զեռայ ու կը գալարի: Զննենք ուրեմն մանրամասնաբար այս նորատեսակ արարածս:

Երևակայէ կապարեայ արեգակ մը, կթուցիչ ջերմութիւն մը, անձայն և անխոխով ջուրեր, կպրոյ և ծծմբոյ դարչահոտութիւն մը չորս կողմէդ, իբր թէ ոտքիդ տակը հրաբուլիս մը ժայթքելու մօտ ըլլար, աւելցուր նաև անտանելի ու տարժանելի թալկութիւն մ'ալ՝ որ կը թմրեցընէ ու փայտ կը կտրէ անդամներդ՝ ինչպէս երկարատև խոշ տանգանք մը: — Ահա քեզի այն օրն և այն ժամերն, արևն յետ քիչ մը ժամաշակ առ'ի շեղ երկրիս վրայ նայելու, կը սկսի բարձրանալ, և հասնելով միջօրէին վրայ, կ'արձըկէ շեշտակի երկրիս վերայ իր տէգընկէց ճառագայթները և մինչև անոր խորքը կ'այրէ կը մրկէ: Երբ

կը հասնի զիշեր և երկրիս շոգիացումը մթնոլորտին վերերը կը զիգուի, և երբ թռչունք կենդանութիւն կ'զգենուն ծովային սիգաշարժ օդէն, այն ատեն մարդս ալ քիչ մ'ողի առնելով՝ կը թողու ինքն ալ իրեն հիւզը՝ յորում բովանդակ օրը բանտեալ մնացեր էր, — և կ'ընէ դուրս շնչելու այս կենդանատու զովութիւնը:

Բայց շատ չյառաջենք, մինչդեռ թռչունք օրուան ջերմութենէն լլկեալ և տանջեալ կը հանգչին կանաչագեղ հովանեաց ներքև, խառնաշրփոթ և կէս փոշիացեալ տերևոց մէջէն անընդհատ շնչին մը կը լսուի. և եթէ սիրտ ընես եւ դարձընես աչքդ, կը տեսնես դիւրաթեք ու ճկուն առարկայ մը, որ սողալու ատեն համեմատական կամարներ ձևացնելով, կ'երթայնալս հանդարտաբար հաստ բունի մը կը պլլուի, և յետոյ ահեղ ցնցում մի տալով մարմնոյն՝ նետի պէս ծառէն վեր կը սուրայ, կը թռչի. — այս է Պօա օձը:

Երբ կը զարթնու Պօան ու կը սկսի քալել, բոլոր երկրորդ կարգի սողունք և միջատք սարսափած կ'ուզեն փախչիլ. բայց յերկիւղէ կապեալ, կաշկանդեալ տեղերնին, վերջապէս զոհ կ'ըլլան ահեղ սողնոյս:

Կղզին՝ որուն ընդարձակածաւալ անտառաց մէջ կը տիրապետէ Պօան՝ Դիւմոր կ'ըսուի. իսկ այն մթաստուեր անտառ՝ ուր պատմելիքս եղած է, քիչ հեռու է Տիէլհի փոքրիկ աւանէն: — Տիէլհի, ուր հազիւ յիսունի չափ տուն կայ, մին քան զմիւսն տձև և բոլորը ցանկով մը շրջապատած, բնակարան և գերեզմանատեղի եղած է սակաւաթիւ վատառողջ Եւրոպացւոց ոմանց և բազմաթիւ Մալէացւոց. հոն կ'ապրի նաև Պօա օձը, այն ահաւոր սողունը՝ որուն համար միլիոնաւոր միջատք բաւական չեն, և չյագենար՝ մինչև որ իրեն երագընթաց արշաւանացը մէջ գոմէշ մը չսպաննէ ու չկլլէ:

Պօան կ'երակուրը գոմէշն է. երբ բռնէ մէկ մը, կը քարչէ կը տանի անտառի մէջ, ու մեծ ծառի մը կը կրթնցնէ,

ու կը սկսի ծառին և կենդանոյն չորս կողմը պլլուիլ, և այնպէս ուժով կենդանին ծառոյն հետ կը կապէ, որ կենդանին կը խզթուի. ոչ գոմէշեն եղջիւրնեւրը՝ ոչ իր բառաչը և ոչ ահագին ուժը՝ կրնան զինքը Պօային ձեռքէն ազատել: Այս դարհուրելի տեսարանիս կը յաջորդէ կերակրոյ ժամանակը: Կը քակուի ծառին վրայէն, ու անշնչացեալ գոմէշը զետին կը ձգէ. կ'երկնայ բոլոր երկայնութեամբը գոմէշին գլխոյն առջև, կը բանայ իր ծամելիքը՝ որուն առաձգականութիւնը երևակայութենէ դուրս է. կը ճարճատին մարմնոյն օղակները՝ երբ կը սկսի զանոնք իրարու մօտեցնել. անգամ մ'ալ կը չնչէ, և չորքոտանին ահագին ցնցմամբ կը սկսի ներս մտնալ. այն ինչ կիսով չափ կը կլլէ իր բռնած որսը, կը հանդարտի որկորածէտ սողունը, կը թմրի, և լքեալ և ուժաթափ կը սկսի քնանալ: Եթէ պատերազմէն առաջ միայն էր Պօան, և կամ մատակը այս միջոցիս հեռու տեղ մը կը քնանայ, ալ վախ չկայ անոր քով մօտենալէն. կը քնանայ ըսինք, բայց աւելի ճիշդ է ըսել թէ մեռած է, վասն զի կոճղէ մը աւելի զգայութիւն չունի: Իրաւ այսպիսի վիճակի մէջ Պօան սպաննելը արիութիւն չէ՝ բայց խոհեմութիւն է. աւելի ընտելի է սովալլուկ վագրի մը և կամ առիւծի մը հետ պատերազմիլ անապատի մէջ, քան ահաւոր սողնոյս հետ անտառի մը մէջ:

Բայց որովհետեւ Դիմոր կզգւոյն անտառին մէջ գտնուած գոմէշները Էւրօպացի գաղթականաց և հարկատու հպատակաց էին, որով Պօայի գոմէշներուն հետ ըրած պատերազմը ասոնց մեծ փնաս էր. տեղւոյն վարիչը ուղեց կանոնաւոր որսորդութիւն մը հաստատել սողնոյս ճեղքը ջնջելու և կամ հեռացընելու համար: Այս բանիս համար քաջասիրտ և ուժեղ մարդիկներ ժողովեց, խոստանալով անոնց նոյն երկրին մէջ շինուած կերպաններ, որ զիշեր ցորեկ մթաստուեր անտառին մէջ պատերազմին ահաւոր սողնոյս հետ. զէնքերնին էին սուր, կարճ և ատամնաւոր նե-

տեր, և քրիշ (տեսակ մը սուր): Բայց այս ձեռնարկը յաջող ելք մը չունենալով, վասն զի մարդկանց ջարդը անհամատ աւելի էր քան սողնոցը, հարկ կ'ըլլայ ուրիշ հնարք մը մտածել: Պ. Բինդոյ տեղւոյն վարիչը կը մտածէ բոլոր օձաբնակ անտառին կրակ տալ, բայց խոհեմութեամբ նախ մէկ մասը կ'ուղէ այրել. գոմէշներ կ'արձկէ ներս, և երբ անոնց բառաչէն կ'իմանայ որ Պօայի որս եղեր են, այն մասը շրջապատել կուտայ. ինչպէս որ գիտենք Պօան ուտելէն ետքը քանի մը ամիս թմրած կը մնայ. այս միջոցիս արիասիրտ և աներկիւղ փայտահարներ կը մտնան անտառին մէջ, կը սկսին այն յաւիտենական կոճղերը հանդերձ իրենց մեծատարած ճիւղերովը կտրել, վար ձգել. կրակը կու տան անտառին, բոցը կը սկսի բարձրանալ, ամեն բան կը շրջապատէ, ամենայն ինչ կը սկսի այրիլ, օձերն ալ մէկտեղ. կատղած յուսահատած, սուլելով փչելով մահուրնէ ազատիլ կը ճրգնին, կը սկսին ցատկոտել բոցէ շրջափակին մէջ, ծառոց վերայ ելլալ և անոնց ամենաբարձր ճիւղոց վերայ, որպէս զի զիրենք պատող հրատուր փակարանէն դուրս նետուին, բայց վայրապարջանք, զարհուրեալ և կիսով չափ տոչորեալ, հնոցին մէջ կ'իյնան և կը մեռնին:

Բայց երբ Պօան լուսոյ և արեգական փափաքելով կը թողու իւր մթաստուեր և լուռ անտառը և տափարակաց վերայ կ'եկէ, բնակչաց կեանքը այն ատեն աւելի վտանգի մէջ է, որչափ ալ լաւ պատասպարեալ ըլլայ բնակչութիւննին: Պօան խորամանկ և կեղծաւոր քան զբորենի և քան զվագր, կը մտնէ փակարանաց մէջ, եղած հետոց վրայէն սողոսկելով առաջ կ'երթայ, որպէս զի ձայն չչնկոց չհանէ: Կը թեքէ և կորացունէ զլուխը ծառոց տերեւոց և ոստոցը ներքև, և եթէ հարկ ըլլայ բարձրացնել ամենայն զգուշութեամբ, նախ մտիկ կ'ընէ թէ արդեօք մօտերը դիւրըմբընելի որս մը կայ, և յետոյ կը սկսի այն կողմը շարժիլ. այս միջոցիս տեսնալու

է Պօային ոստոստելը, կծկիլը և տա-
րածուիլը, յաջ և յահեակ՝ ետև առաջ
շարժիլը, որ ուրիշ բանի չկրնար նման-
ցուիլ՝ բայց մեծամեծ կայմերով հրա-
տուշոր նաւու մը:

Բայց երբ քաղցը սովորականէն ա-
ւելի նեղէ զՊօան՝ այն ատեն վերը ը-
սուած պոռնիկներն ալ մէկդի կը թո-
ղու, արծակ համարձակ կը սկսի յառաջ
խաղալ, մոլեղնաբար էն բարձր թփոց
վերայ կ'ելլէ, մորիկի պէս կը փչէ, և
նետի մը պէս կ'ընթանայ: Վայ այն մար-
դուն, եթէ այս վայրկեանիս Պօան
վրան յարձակի, ազատում չկայ: Դժուա-
րին է ըմբռնել Պօա օձին ծամելաց
առածգութիւնը. գլխոյն մեծութիւնը
մարդուս երկու բռանց մեծութեանը
հազիւ կը հասնի. բայց կոկորդը այն-
չափ կը բանայ այնչափ կ'ընդարձակէ,
որ ահագին մեծութեամբ կտորներ կը
կլլէ. այնպէս որ երբ ամբողջ գոմէշի
մը մարմինը այս կենդանի գերեզմանիս
մէջ կը մտնէ, թեփաւոր մորթին վերայ
գմբէթներ կը բարձրանան, և գոմէշին
եղծիւրները սայրասուր կը կանգնուին
գրեթէ զիրենք բանտող կարծր պա-
տեանը պատռելու մօտ:

Բայց չկայ տեսարան այնչափ հե-
տաքրքրական և միանգամայն զարհու-
րելի, ինչպէս երկու Պօաից մէջ մատակ
մը յափշտակելու և կամ գոմէշի մը
յողթելու համար ծագած կռիւը: Պ.
Բինգոյ կը համարձակի իրիկուն մը ան-
ձամբներկայ գտնուիլ այս տեսարանիս.
Կռուոյն տեղէն հազար քայլ հեռու՝ իւր
հովանոցին՝ մէջ կեցած, կը լսէ ուժգին
հողմոյ նման երկու ահագին Պօայից
կռուոյն քաջահնչող աղաղակը. կը տես-
նէ որ գետնին վրայ սփռուած ծառոց
ճիւղերը կը տատանէին, և երկու հա-
կառակորդաց արագ արագ շարժմուն-
քէն օդոյ մէջ կը պտոյտքէին: Շատ
չանցնիր՝ մէկ ոստոստմամբ Պօաները
երկու մօտակայ զօրաւոր ծառոց ճիւ-
ղերէն վեր կը սողոսկին. վայրկեան մը
հանգարտութիւն կը տիրէ և միայն ճիւ-

ղոց շարժմունքէն, որոնց մէջ երկու ըմ-
բիշները ոլորեալ գալարեալ կեցած էին,
լուծիւնը կ'ընդհատէր: Յանկարծակի
ծառերը կը տատանին, և երկու զօրա-
ւոր ուժգին պարաններ իրարու վրայ
կը յարձկին, և միայն իրենց տտան վեր-
ջին օղակներովը ծառերէն կախուած,
օդուն մէջ իրարու հետ կը պլլուին, և այն-
պէս կապեալ կաշկանդեալ կը մնային,
ինչպէս անդունդի մը վրայէն ձգուած
կամուրջ մը: Կամարաձևը երբեմն կ'իջ-
նար երբեմն կը բարձրանար, և երբեմն
ալ երկար ժամանակ անշարժութեան
մէջ կը մնար, սակայն այս անշարժու-
թեան մէջ պինդ և խիտ օղակներն կը
սեղմէին, կը մանրէին և կը ջախջախէին,
և առերևոյթ խաղաղութեան մէջ, ցաւ,
կատաղութիւն և յուսահատութիւն կը
տեսնուէր. պէտք էր որ Պօաից միոյն
դիակը գետին իյնար, և միւսոյն ալ
անզգայ մնար մէկալին քով: Քառոր-
դէն աւելի էր որ կռիւն սկսած էր, երբ
երկու ախոյեանք, իբրև թէ առաջուց
խօսք դրած ըլլային, զիրար կը թողուն
և իրենց առաջին դիմքը կ'առնուն, պա-
տերազմը կրկին անգամ սկսելու ժա-
մանակը կու գայ, և երրորդ սուլելնին,
որ քան զառաջիններն աւելի խղղուկ և
երկար կը տևէ, պատերազմիս նշան կը
համարուի. երկու սողուններն դարձեալ
ծառոց ողորկ բունոց վրայէն վեր կը
սողոսկին, իւրաքանչիւրն իր պատե-
րազմին ասպարէզն կը մտնայ. ահեղ և
զարհուրելի պատերազմ մը կը բացուի,
և վերջապէս ըմբիշներէն մին իւր հա-
կառակորդն իրեն կը քաշէ. երկու ա-
հաւոր հրէշից մարմինքը կը մօտենան
իրարու՝ մին անշարժ, իսկ միւսը կար-
գէ դուրս շարժմամբ և մեծաւ զգուշու-
թեամբ մը կը պլլուի ծառոց չորս կող-
մը, ու կը խղզէ պարտեալ թշնամին:

Այսպէս իրենց սէրն ալ կատաղու-
թեանցը հաւասար է: Այնպիսի պա-
րագայի մէջ ուրիշ բան չես տեսնար,
ուրիշ բան չես լսեր՝ եթէ ոչ ջերմնոտ և
սուր սուլելներ, արագ արագ ոստոս-
տելներ, օդուն մէջ պտոյտքներ և բեր-
նին ստէպ ստէպ բացուիլ գոցուիլներ:

Անտառին ամենաբարձր ծառոց գա-
զաթանց վրայ կ'ելեն և իբրև թէ թևեր
ունենային՝ օդուն մէջէն ահագին աս-
պարէզ դէպ իրար կ'երկննան. փոփո-
խակի կը դիտեն զիրար և իրենց մոլեգ-
նութեան կատաղութեամբը՝ ամենայն
ինչ կը վրդովեն անտառին մէջ։ Այն-
պիսի ժամանակ աներկիւղ են ինչ և իցէ
վտանգէ. ոչ հրազինուց աղաղակը կա-
րող է զիրենք չփոթել և ոչ թերևս անտա-
ռին հրդեհիլը։ Շատ մալէացիք այսպի-
սի կատաղութեան ժամանակ փորձեր
են անոնց դիմագրաւ ելլելու և իրենց
թունաւորեալ նետերովը զանոնք վի-
րաւորելու. և դեռ չէ լսուած որ մէկ
մը այսպիսի յանդգնութեան մը զոհ
եղած ըլլայ։

Ըստ ճանապարհորդաց ոմանց Պօան
Նուր չկրնար մտնել, բայց ըստ Պ. Բին-
դոյի և իւր ընկերաց՝ Պօան ոչ միայն
Նուրէն չվախեր, այլ և շատ անգամ
Ովկիանու մրրկածուի ալեաց մէջ կը
մտնէ, և քանի մը ժամ աներևոյթ ըլ-
լալէն ետև՝ կը դառնայ իրեն միայնա-
բանը իբրև 'ի շրջագայութենէ կամ
յաշխարհակալութենէ. այս յանդուգն
արշաւանքը երբեմն ալ խմբովին կ'ընեն
Պօաները, կ'ըսէ Պ. Բինդոյ, բայց ոչ եր-
բեք տեսնուած է որ Ովկիանու մէջ
կռուին։

Այս յաղթանգամ կենդանին թէ-
պէտ և բազմաթիւ կը գտնուի Տելհի
շրջակայ անտառներուն մէջ, բայց ոչ
այնքան անհուն բազմութեամբ որ շատ
ճանապարհորդք կը ջանան հաստատե-
լու։ Դիտուած ալ է դարձեալ որ Տել-
հիի շրջակայքը ոչ իժ կը գտնուի և ոչ ու-
րիշ տեսակ սողուն, բաց 'ի այս Պօա
դազանէն։ Եւ այս նշան մըն է որ այս
օձը ամենայն սողնոց սպառիչ թշնամին
է, և բոլոր ստորնագոյն ցեղերը իր դժո-
խային որովայնին կերակուր ըլլալով
անհետացեր են, միայն զինքը միապե-
տական իշխեցող թողլով այն երկիւ-
ղալի միայնութեանց, ուստից ամենայն
շունչ ահուդողով կը հեռանայ. բայց և
այնպէս յանդուգն մարդկութիւնը վը-
տանգից դիմագրաւ և քաջութեան ա-

նուն մը ժառանգելու համար, կը հա-
մարձակի զինու զօրութեամբը այն ա-
հեղ իշխեցողը մարտի գրգռելու, և իր
իմաստութեամբը անոր անհուն բազ-
մանալը ընկճելու։

ԵԳԵՐԻԱ ՅԱԻԵՐԺԱՐՍԻՆ ԱՅՐԸ Ի ՀՌՈՄ

Ով որ Հռոմ՝ Սերաստիանոսի դռ-
նէն կ'ելլէ, որ հին ատեն Ապպեան
դուռն էր, աւրուած ճամբէ մը՝ ամայի
և անբնակ ձոր մը կը հասնի։ Գետինը՝
հազարումէկ աղբիւրներէ ելող ջրերէ
ռոգուելով, ամենարգասաւոր կանա-
չութենէ մը ծածկած է։ Հոն տեղուանք
ուրիշ բնակութիւն չկայ՝ եթէ ոչ գեղա-
ցոց տնակները. և այն խորին լռութիւ-
նը կոտորոյները միայն թունոց գեղգե-
ղաձայն երգերն են։ Այն տեսարանին
վրայ չեմ գիտեր ինչ խստութիւն և
ինչ վսեմութիւն, կը տիրէ ու սիրտը
տխուր անգորրութեամբ մը կը լեցնէ,
ինչպէս թէ տաճարի մը առանձնու-
թեանը մէջը մտնայիր։ Այս ձորիս մէջ,
որ Քաֆֆարելլա կը կոչուի, է Եգերիա
յաւերժհարսին այրը, որուն հետ՝ Հռո-
մայ երկրորդ թագաւորը՝ Նումա Պոմ-
պիլիոս՝ գաղտնի խօսակցութիւններ ու-
նեցաւ, ու սորվեցաւ թէ ինչպէս պէտք
էր կարգաւորել կրօնական պաշտա-
մունքը՝ որ դից հաճոյագոյն ըլլան, և թէ
ինչպէս պէտք էր քուրմերը ըստ իւրա-
քանչիւր դից առանձին առանձին որո-
շել։

Այն անտառէն՝ որուն մէջ հին ա-
տենները յաւերժհարսիս նուիրած տա-
ճար մը կար, ուրիշ բան չկայ մնացած
այսօր՝ եթէ ոչ մէկ քանի դաբնիք. նոյն
խակ աղբիւրին վրայ՝ որ իրեք ճառա-
գայթի ձևով կը բղխէ, տեսակ մը այր
կ'ամբառնայ, որուն խորը՝ արձանա-
խորշի մը մէջ՝ դեռ ևս հին արձանի
մնացորդքը կը նշմարուին, որ մարդ մը
կը ներկայացնեն։ Յորեկուան լոյսը դը-